# Եվ լույսն էր նկարչի

*Նկարիչ* ***Խաչիկ Հարությունյանին***

- 1 -

Մոլոր լույսի խուրձը զարնվում զանգվածին ու փշուր-փշուր էր լինում: Սև՛ էր, լու՛յս էր ու սարդոստայն: Ինքը ճչում, պապանձվում, աղաղակում ու ձայն չէր հանում, և քներակը, որ մութուլույսի վայրիվերումներից ուռել-ընդգծվել էր, իրեն երևակվում էր պորտալարի պես մի բան: Սևը շատանում, ալիք տալիս և մուգ կպչունին մերձ արյուն էր հոսում՝ ճխխացող լույսով... Ինքը երկյուղում էր, թե չլինի՞ արյունն այնքան թանձրանա, որ սևն ամբողջ գունապատկերը բռնի:

Արդեն արթմնի, երբ փորձում էր հասկանալ, հանկարծ կռահեց. անսահման հեռվից էր հասել ճառագայթների խուրձը, եկել-ծանրացել և որ փափագել էր սփռվել-քչքչալ-հանդարտվել, զարնվել էր մշտագո զանգվածին...

- 2 -

Կիսաբաց աչքերով նկարիչը երանգներն էր զանազանում: Եվ որպեսզի ազատվի պաշարած երազի տագնապներից,

վեր կացավ անկողնուց, մոտեցավ նկարակալին ու փորձեց այն փոխադրել կտավի վրա: Չստացվեց ոչինչ: Հրաժարվելով արհեստական այդ հնարքից՝ վրձինը լվաց, դրեց տեղը, ապա հագավ շորերը: Գրպանում մի հնգանոց էր մնացել:

Ուրիշ անգամ նա գուցե անփույթ չվարվեր իր տեսած զարմանալի երազի հետ. փոքր-ինչ երկար տրտմեր մի բաժակ սուրճի շուրջ կամ ծանոթ բախտագուշակին պատմեր՝ ունկնդիր՝ նրա հնաոճ մեկնությանը: Սակայն այդ օրը հյուր էր ունենալու. մինչև ճաշ մի փոքրիկ սեղան պիտի զարդարեր իր նախասիրած «Ոսկեվազ» գինիով, սուրճով ու լեռնային մանուշակներով:

Նա՞ էր գալու:

Զրուցելու էին, և կինը տեսնելու էր լեռնային մանուշակները: Նրա կանաչ աչքերն իրեն էին նայելու, հետո, իբր ուշադիր՝ սենյակին, սքողված անտարբերությամբ՝ ամուր թախտին և թրթռացող ջերմությամբ՝ սեղանին: Շնորհապարտության, վերհուշի տաք նարնջալույսն էր ողողելու այդ ամենը:

Երազի բեկորները բազմանում, միավորվում էին, և նա հրահրող մոլությամբ էր տարրալուծում մութի ալիքը, թանձրացող արյունը, ճառագայթների խուրձը և պատի առճակատող զանգվածը:

- Վերցրեք, - դրամը թողնելով վաճառասեղանին՝ նա շտապեց դուրս գալ հերթից:

Հանդիպակաց մայթին արևախանձ, տուֆերանգ, չորուկ մի կին էր կանգնած, ոտքերի մոտ՝ բաց ճամպրուկը, մեջը՝ խնամքով դարսված մանուշակի փնջեր:

- Ի՞նչ գեղեցիկ են. մարդ ափսոսում է ձեռք տա, - ասաց նկարիչը և հայացքը սևեռեց ոչ թե նրա բիբերին, ինչպես միշտ՝ որևէ մեկի հետ խոսելիս, այլ գորտնուկապատ մատներին, որ ճամպրուկից աքցանի նման հանում էին ասես իրիկվա ծվենը:

. . . . . .

*«... լույսը ծեփվել պատին, փշուր-փշուր էր եղել...»*

- Երեք փունջ կվերցնեմ:

Իր փոքրիկ պահանջմունքը նա բավարարել և հաղթական

էր անցնում բանուկ փողոցը: Չփորձեց էլ զգուշանալ երթևեկությունից. կարծես մեքենան ինքն էր, իսկ մեքենաներն՝ իր մոտով սլացող լուսանկարներ: Ճակատը՝ բարձր, գնումներն՝ ի տես, հեռապատկերում՝ իր դուռը թակող կանաչաչվին՝ նա մոտենում էր շենքին: Չգիտես ինչու, բաղձալի հանդիպման նրբերանգներից առանձնացավ ու թպրտաց այս մեկը. կինը մատնահարում է իր բնակարանի զանգը, իսկ ինքը վախենում է մոտենալ դիտանցքին. զանգ չէ՝ մատների բարձիկներ են իջնում երգեհոնի ստեղներին ու ոսկեկարմիր ներկում օդ ու առարկա, ինչպես սրտի մեջ...

Այդ մտապատկերն իրեն նոր չէր երևում և օրեր անց կարծես պիտ դառնար երջանկության իր նախանշանը:

- 3 -

Երկհարկ հանգրվանի պատշգամբի բազրիքին կռթնած, ամուր մատների մեջ՝ խոհ առ խոհ պեծպեծող ծխախոտը, նա դիտում էր, թե արևն ինչպես է սուզվում լեռնաշղթայի թիկունքում: Նախալեռնային երեկոյի ցուրտը ոսպնյակի նման հավաքում-կենտրոնացնում մտքերն ու ցրիվ էր տալիս: *«Բույսերն աղոթում են արևին, կենդանիների աստվածն արևն է եղել ի սկզբանե, մարդու աստվածն արևն է եղել ու հիմա՝ ոչ: Արեգա՛կ, գնում ես քո կացարանը»*: Արևի հետ դու-ով խոսելու ոգեմշուշում հնամյա մտերմություն դեռ մնացել էր, այն չէր չքացել, ինչպես ավազուտների գետերի հետ է պատահում, և կշարունակվեր ոգեխոսությունը, թե մտային հոսքը չկտրեր հանգրվանի առջև ճռնչացող արգելակների ձայնը:

Վարորդն ինքնագոհ իջավ և իմիջիայլոց շրխկացրեց մեքենայի դռնակը:

Հերթապահը ներքև իջավ: Նրանք հավասարվեցին:

... Ինքը բազրիքից արդեն ետ էր քաշվել՝ թողած իր խոհասաղմերի հետ շոշափման ոչ մի կետ չունեցող այդ կանոնավոր հարցուպատասխանը, բայց շրջվեց՝ շինամերձ սալահատակին կրունկների թմբկազարկեր լսելով: Կնոջ ուսագլուխներին փարթամ ու թուխ մազեր էին ալիքվում, մետաքսյա շրջազգեստը գրկել էր մեջքը, ինչպես կեղևը՝ ծառը, գոտին

օղավոր էր, արծաթյա: Քայլ քայլի ծածանվում էր կինը: Իր ուշադիր հայացքից թե պատահմամբ կինը դեմքը դարձրեց պատշգամբի կողմը: Նկարիչը դիպավ կանաչ աչքերի, խոշոր աչքերի, աչքերի և դարձյալ աչքերի: *«Այդ պահին, - հետագայում հիշում էր նա, - ես ասես արթնացա, կամ անանուն մի անծավի առջև մարխ վառեցին. իմ երջանկության բնազդը դուրս լողաց»:*

- 4 -

Բացի ծանոթ բախտագուշակից՝ բակում ոչ ոք չկար: Նստած աթոռակին՝ թազբեհն էր քաշում ու մտազբաղ հետևում գնացող-եկողին: Նկարիչը չէր ուզում, որ նա իր հյուրին նկատեր: Հարգալից բարևեց և արագ անցնում էր, երբ թիկունքից լսեց.

- Վերջերս ուշ-ուշ ես երևում, մե՜ր տղա, չլինի՞ ծնողներիդ մոտ էիր գնացել: Տես, ինձ չմոռանաս. երազը ճիշտ բան է...

Պառավին նա լոկ ժպտաց, թեև անպատեհ խոսքուզրույցն անհանգստություն հաղորդեց իր տրամադրությանը: Ցույլ-ծույլ բարձրացավ աստիճաններով: *«Օրվա սկիզբը գիշերվա երազն է... Օրը մերկ ու մաքուր ե՞րբ է հայտնվում... Ցիածանի ամեն գույն հաջորդն է մյուսի... Հաջորդում են միմյանց, ինչպես տարվա եղանակները, հասակները մարդկանց, միտքը՝ ապրումին, հասունությունը՝ տառապանքին... Երազն ամեն ինչ չի ասում՝ նշան է տալիս... Երանի մի օր մարդն հսկի իր քունը... Պառավն աշխույժ խելք ունի՝ անհայտի մասին է մտածում, իսկը՝ մոգուհի, մի օր այս դիրքով էլ նկարելու եմ»:*

Հասել էր իր բնակարանին:

Սկսեց սեղանն իր ուզած տեսքին բերել. փունջը դնում էր կենտրոնում, զույգ բաժակ ու ափսե՝ դեմ-դիմաց, «Ոսկեվազը»՝ անկյունում: Հետո սպասքի տեղերն էր փոխում, նայում էր կարծես նատյուրմորտի ու այնքան տեղաշարժեց, մինչև իրեն բռնեց այն մտքի վրա, որ և՛ սպասում է սրտատրոփ, և՛ նկարելու ցանկությունն է աճում: Այդ սայթաքուն քայլից ետ պահեց իրեն: Դեռ մեկ ժամ կար մինչև հյուրի գալը: Նա ուզեց կարգի բերել սենյակը: Կտավակալներն ու շրջանակները՝ պատի տակ, ներկերը, վրձիններով կճուճը լուսամուտի գո-

գին դրեց, հարդարեց թախտի ծածկոցն ու մոր ասեղնագործ մութաքան, աթոռների վրայի գրքերն ու վերատպությունների ալբոմները դարսեց: Յուղաներկի հոտը բռնել էր սենյակը:

Առարկաների այդ քանակը նա նո՛ր ուժով էր ընկալում: Կըտրուկ հրաժարվեց իր սենյակը հավաքված ներկայացնելու մտադրությունից: Եվ քիչ անց մտովի հիանում էր հանգրվանի դիմաց տարածված հովտի մարգագետիններով, դրանց զըմրուխտն ընդգծող ծորափերով, հրաբխային լեռան ստորոտում սփռված տարանուն ապարներով, որոնք թռչունների պես վայրէջք կատարել բարբարոս տեղանքում ու երևի թռիչքի ազդանշանի էին սպասում:

- 5 -

Մի երեկո, երբ նա լեռների մայրամուտն էր մարմնավորում կտավի մակերեսին, տապալվող խոտի սվվոց լսեց: Մա՞րդ էր, թե՞ կենդանի: Ինքը բավականին հեռացել էր հանգրվանի շըրջակայքից: Լավ էր այդպես. ոչ ոք չէր տեսնի, թե ինչով է զբաղվում: Նկարելիս հենց նայում էին, թեթև վարագուրվում էր ներքին տեսադաշտը: Այդ ամենը նա համեմատում էր իրարու գուրգուրող զույգին լրտեսելուն: Եվ հաճախ էր կրկնում՝ կա չէ՞, զուտ իմը, որ հայացք չպիտի դիպչի, այլապես խլածաղկի բախտին կարժանանա:

Նա էր՝ կանաչաչվին: Գրկում՝ երկարացողուն երիցուկներ, ուսերին՝ ցանցկեն սպիտակ շալ՝ գալիս էր անհոգ ու ինքնամոռաց, կողքից՝ մանչուկը: Փոքրիկը թռչկոտում, վազ էր տալիս թիթեռների ետևից, մայրի՜կ, մայրի՜կ էր կանչում ու մանկան իր առաջին հայտնագործությունները մատնացույց անում: Շուրջն ինչ որ կար, ինչ որ չէր տեսել քաղաքում: Մայրն այո կամ ոչ էր ասում. այսինքն՝ հասկանում եմ քեզ, ազատության մեջ աշխարհով մեկ ես եղել, բայց թույլ տուր ես էլ ինձ համար մի քանի րոպե ապրեմ, քաղցրի՜կ իմ ցավ:

Նրանք նկատեցին միայնակ տղամարդուն, և առաջինն արծագանքեց մանչուկը.

- Մայրի՛կ, նա մենակ ի՞նց է անում, հը՞:

- Նկարում է: Դու քո խաղն արա:

- Մատիտո՞վ է նկարում: Ուզում եմ տեսնեմ, գնանք, մա՜ա՜ա՜:

Մայրը չհակառակվեց:

Նկարիչը վրձինը ետ պահեց կտավից: Նա համրացել էր մոտեցող կնոջ սպիտակի դեմ. շալն էր շեշտում, և նրա ֆոնը մթնշաղներն էին: Որքան մոտ էին գալիս, այնքան շատանում էր կանաչը՝ աչքե՜րը, աչքե՜րը, աչքե՜րը... Ինքն արդեն կորցնում էր արևամուտի փափուկ խղճմտանքը:

Լռության ալեվետումը փոքրիկը խաղաղեցրեց.

- Քելի, ի՞նց է սա:

- Մթնշաղ, - մեն-մի հատիկ բառով կարկամեց:

- Ինց շա՞ղ:

- Հակոբի՛կ, մը-թըն-շաղ. ճի՛շտ արտասանիր, - ուղղեց մայրը:

- Քեզ ինչպե՞ս ասեմ, որ պարզ լինի: Ցերեկը լույս է լինում, չէ՞, արև կա, իսկ գիշերը մութ է: Այ, երբ ցերեկը դանդաղ-դանդաղ գիշեր է դառնում, լույսը խառնվում է մթին: Հապա նայիր, - նա ցույց տվեց լեռները, - սա մթնշաղ է: Հասկացա՞ր:

- Այո, քելի, հասկացա: Մա՜մ, սիրուն է, ցէ՞...

- Իհա՜րկե, գառնու՜կս, - տղամարդուն ժպտաց մայրը՝ գորովանքով գիրկն առնելով մանչուկին, - դե ասա՝ ցտեսություն, որ գնանք:

- 6 -

Նկարիչը խորն էր ներս քաշում ծուխը: Եվ որքան էլ ջանում էր կնոջը պատկերացնել ընտանեկան կապերից ազատ՝ չէր հաջողվում. գու՛յն էր, ցավով շողարձակող գույն: Աստիճաններին ոտնաձայն լսեց: Անշտապ բարձրանում էր ինչ-որ մեկը: Յուրաքանչյուր քայլափոխով նա սիրերգ էր սփռում: Երկնքից հրեշտակներն իջել, շնորհիվ իր երևակայության, մանչուկին տարել էին արդեն մոր գրկից. գուցե հոր մոտ:

Ինքը չհարցրեց՝ ով է. մոտեցավ դռանն ու կարծում էր՝ հերթապահը կլինի: «Որևէ բանի կարիք չունե՞ք», - կասի նորից ու կզննի սենյակը: «Իսկ դու՞ք», - այդպես թունոտ ինքն էլ իր հարցը կճոճի ու կհասկացնի, որ առնվազն անամոթություն է

կարգուկանոնի քողի տակ մարդկանց սեռը լրտեսելը: Նախահարձակման սլաքը կանգնեց օդում. իր դիմաց կանաչաչվին էր:

- Բարի երեկո: Կներեք, որ խանգարեցի: Կարդալու որևէ բան չե՞ք ունենա: Հակոբիկը քնեց: Ձանձրանում եմ:

- Համեցեք, ներս եկեք:

- Հոգ չէ, ես կսպասեմ, ուշ է:

- Ես պիտի փնտրեմ:

Կինը շեմն անցավ:

- Ահա աթոռը: Դետեկտի՞վ, թե...

- Ցանկալի է՝ չափածո:

- Պոե՞զիա: Հանգստյան տներում սովորաբար վեպ են ընթերցում, երևի տանը ժամանակ չեն ունենում: Հատկապես՝ կանայք: - Չե՞ք հրաժարվի մի գավաթ սուրճից:

- Ի՜նչ նեղություն: Հետո էլ ասելու եք, որ ձեր գավաթը նայեմ...

- Իսկ եթե ես նայե՞մ...

- Նկարիչները պիտի որ լավ հասկական պատկերները, հետաքրքիր է...

- Եվ ոչ միայն պատկերները...

- Ուզում եք ասել՝ նաև կանանց...

- Ներողամիտ եղեք...

Նկարչի վերջին բառերից խաղի մեջ հանդիմանանքի երանգ մտավ: Կինը դադար տվեց:

- Սուրճը պատրաստ է: Ես մի փոքր դառն եմ արել. ոչի՞նչ, քաղցր չեմ սիրում:

- Ես էլ, թեև կանայք ու երեխաները քաղցրի գիժ են:

- Արևելյան խոհանոցի զարդն է քաղցրավենիքը: Ճիշտ է, ես չեմ ճաշակում, սակայն մենք վատ գիտենք այդ խոհանոցը:

- Եթե կին ունենայիք, նա կստիպեր ուտել Նոր տարվա իր թխած գաթան:

- Ինչպես դուք՝ ձեր ամուսնուն:

- Սխալվեցիք: Նա՛ է ամեն շաբաթ ստիպում ինձ խմորեղեն թխել, և բացվում է ախորժակը:

- Ձեր կառուցվածքը, դիմագծերը պիտի որ կապ չունենան նրա ստամոքսի հետ: - Նկարիչը կկոցեց աչքերը:

- Դուք միշտ մենա՞կ եք լինում նկարելիս...
- Միշտ, ինչպես կանայք՝ արդուզարդի հայելու դեմ՝ քնելուց առաջ:
- Իսկ այն նկարը, որ Հակոբիկին բացատրում էիք, ավարտեցի՞ք: Մթնշաղը...
- Կիսատ եմ թողել:
- Խանգարեցինք, - փաղաքույշ հեգնեց կինը:
- Չգիտեմ ինչու՝ դրեցի մի կողմ:
- Դպրոցում ամենից շատ արտասանում էի Տերյան: Մի երգ էլ կար. «Մթնշաղ է իջել, գալարվում են լույսեր...», հիշու՞մ եք:
- Երևի նրան էր հիշեցնում, - վարորդ ամուսնուն ակնարկեց նկարիչը: -Նա՞ էր Ձեր անուրջների ասպետը:
- Ո՛չ, ո՛չ... Ես հորինել էի մի պատանու, որն ամեն գիշեր գալիս կանգնում է պատշգամբիս դիմաց ու սպասում իմ դուրս գալուն: Իսկ ես սպասեցնել եմ տալիս, սպասեցնել եմ տալիս ու վարագույրի ետևից հրճվում, թե նա ինչպես է քայլամոլոր շրջում մեր բակում:
- Իսկ նա՞:
- Չգիտեմ: Հակոբիկս հիմա կարթնանա, ես գնամ: Գտա՞ք գիրքը:
- Ահա՝ «Պարտիզպանը»:
- Շնորհակալ եմ հյուրասիրության համար: Իսկ այս գիրքը կկարդամ՝ կվերադարձնեմ: Դուք դեռ երկա՞ր եք մնալու:
- Որքան սիրտս կամենա: Մինչև ձեր մեկնելը:
- Օյ, չե՜ք ավարտի այն կտավը:
- Ուրեմն՝ հույսս Աստծո վրա է...
- Որ այդպես է՝ Տերը օգնական...

- 7 -

Երբ ոտնաձայները մարեցին, հարևան բնակարանի մետաղյա դռան աղմուկը վիրավորեց հուշի երաժշտությունը: Նկարչին հատկապես այդ պահերին առավել կարևոր թվաց այն միտքը, թե փականը, պարիսպը, ճաղացանցը, սահմանը եթե հորինել է մարդը, ապա որևէ բանի արժեք տալու բուռն

եռանդից է, և կուրորեն ընդօրինակում է դարեր: *«Դուռդ ինչու՞ ես կողպում, ինչու՞ ես վանդակում պահում թռչուններին, տառապանքն ինչու՞ է կաղապարվում մարմնի ժամանակի մեջ... եթե սահման ես գծում, անսահմանության թրթիռն ես մեռցնում... Ամեն բան չէ, որ պիտի մեխվի դիմացդ, որ ձեռքդ դիպչի... Դարեր շարունակ մեղապարտ ապրել ու իրար փոխանցել փականը, պարիսպը, սահմանը... և գաղափարն այդ տալ, առնել... Դե բա՛վ է. կռիվ ունես՝ ուրիշ անգամ. դռան դղրդո՞ցը քեզ ափերից հանեց: Մի՛ հուսահատվիր՝ նա կգա, քեզ չխոստացավ, բայց կգա... հանգիստ վառիր ծխախոտդ, ծուխը ներս քաշիր ու կրկնիր՝ դարձ ի շրջանս գույնի»:*

- 8 -

Որքան մոտենում էր նրա գալստյան րոպեն, նկարչի հոգում շփոթն ուժավորվում էր: Երազի բեկորների հետ նաև օրվա բույրերի պայծառությունն էր խամրում, և բորբոքվում ապրումների խարույկը: Նա նորովի վերծանեց զանգվածի խորհրդանիշը, որ ճառագայթների ծանրած խրձի դեմ կանգնել ու փշրել էր տարածության մեջ քչքչալու-հանդարտվելու փափագը: Հանկարծ այդ զանգվածը երերաց, ճաք տվեց, տապալվեց ու հողին հավասարվեց՝ սարդոստայն փռելով գորշ տեղանքին: Նաև պառավի վրա հերսոտեց, իր երազագետ պառավի, անվանեց ագռավ ու կքշեր հեռու, թե նա նըստած լիներ ծառի ճյուղին: Տուրևառելով պատկեր ու երանգ, մեղմելով մեկն ու բոցավառելով մյուսը՝ նա ի վերջո սաստեց իրեն՝ հանգի՛ստ, խորխորատ էր, ու կածան է երևում: Իր գիտակցությունը վար նայեց առաստաղից. գլխի տակ մոր կարած մութաքան էր, դիմացը՝ նատյուրմորտի վիճակի բերված սեղանը և իր սիրտը՝ ամենայն բանի հետ կապավոր: Եվ իբրև քամու բերանն ընկած ծաղիկ՝ խոհը կանգ առավ կանաչաչվիի ցավեցնող բառերի վրա՝ Տերն օգնական:

Օրը մայրամուտ էր թեքվում: Հաշտված կանաչաչվիի կորստյան հետ՝ նա գինի էր խմում կում-կում՝ հայելով իր ներսում թափառող բյուրեղներին: Հետո բաժակը հրեց հեռու, ելավ ու քայլ արեց դեպի նկարակալը:

Չանցած մեկ ժամ՝ նա արդեն դիտում էր ավարտուն նկարը: Իրերի, առարկաների մակերևույթին երկնքից բխած տաք մթնշաղներ էին կայծկլտում: Նկարի վերին մասում ոչ այն է՝ ճակատագրի խորհրդանիշն էր, ոչ այն է՝ բախտագուշակի հետմահու դիմակը: Մթնշաղներից մանուշակների բուրմունք էր գալիս: Այնքան արագ, ինչպես երբեք իր կյանքում, նա իր նկարին անուն էլ գտավ. «Եվ թախիծը աչքերի»: Ապա կրծքի տակ առավ գթառատ մութաքան, պառկեց ու կպցրեց հերթական ծխախոտը: Կոպերի ետևում, մշուշների մեջ համատարած կանաչ էր. կինը մոտենում էր, ասես հավերժորեն մտնելու իր բիբերից ներս: Ուսերին՝ ցանցկեն սպիտակ շալ, գրկի մեջ՝ երկարացողուն երիցուկներ, իսկ կողքին՝ մանչուկն էր՝ թռչկոտելով, բացականչելով և իրեն՝ բնության հետ մեն-մենակ մարդուն, հրճվագին նայելիս: